ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Արևաշատ համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար.

1.Արևաշատ համայնքի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար /ծածկագիրը 1.2-1/
Աշխատակազմի քարտուղարը համայնքի ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է ՏԻՄ ռազմավարական և կազմակերպական նշանակության խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը, լուծում է աշխատակազմի առջև դրված գործառույթներից բխող հիմնախնդիրներ, ընդունում որոշումներ:
Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:
Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝
- բարձրագույն կրթության, համայնքային ծառայության կամ քաղաքացիական ծառայության առնվազն առաջատար պաշտոնների 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա համայնքային ծառայության ստաժ և համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ առնվազն հինգ տարվա քաղաքացիական ծառայության ստաժ և քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ վերջին չորս տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին հինգ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երեք տարվա փորձ կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2015 թվականի հունվարի 1-ը պետական կամ համայնքային կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ:
- սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի բ ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացության
- ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն
Նշված թափուր պաշտոնները զբաղեցնելու համար հայտարարված մրցույթները կկայանան 2013թվականի դեկտեմբերի 20-ին ժամը 12^{00}-ին Արևաշատի գյուղապետարանի շենքում, Երևանյան խճուղի 16:
Մրցույթներին դիմող ՀՀ քաղաքացիները փաստաթղթերը հանձնում են անձամբ, ներկայացնելով անձնագիրը կամ անձը հաստատող փաստաթուղթ:
Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը 10^{00}-ից մինչև 16^{00}, բացի շաբաթ և կիրակի օրերից՝ Արևաշատի գյուղապետարանում, Երևանյան խճուղի 16, հեռախոս 094-98-42-43 կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն /հասցե՝ ք.Արմավիր Աբովյան 71,
հեռախոս 0237 2-76-49, 2-07-70 /
Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները ներկայացվող փաստաթղթերի ցանկին և այլ լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրի և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Արևաշատի գյուղապետարանի աշխատակազմ:
Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 10.12.2013թ.: